# ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանը այսու լիազորված է ծանուցելու ի գիտություն Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռներին և թեմերին, որ Ամենայն Հայոց Հայրապետի վճռով կարգալույծ են արված՝

1. Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԱՐԿՈՍՅԱՆԸ—Երևանի Ս. Հովհաննես եկեղեցու ծխատեր, և

2. Տ. ՍՏԵՓԱՆ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ԳԵՎՈՐԳՅԱՆԸ—Երևանի Ս. Սարգիս եկեղեցու ծխատեր:

Վերոհիշյալ երկու քահանաները, դրժելով իրենց ծառայության ուխտը և լքելով իրենց վստահված հոտը, առանց հարգելի պատճառի և առանց եկեղեցական իշխանության արտոնության, մեկնել են ընդմիշտ արտասահման:

Սույն երկու կարգալույծ քահանաները դասվում են աշխարհականների շարքը իրենց նախկին՝ Հարություն Մարկոսյան և Արիս Տեր-Գևորգյան անուններով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
8 Հունիս 1988 թ.

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանը այսու լիազորված է ծանուցելու ի գիտություն Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռներին և թեմերին, որ Ամենայն Հայոց Հայրապետի վճռով կարգալույծ է արված Թբիլիսիի Ս. Էջմիածին եկեղեցու ծխատեր Տ. Միքայել քահանա Կյուրեղյանը, որը, դրժելով իր ծառայության ուխտը և լքելով իրեն վստահված հոտը, առանց հարգելի պատճառի և առանց եկեղեցական իշխանության արտոնության, մեկնել է ընդմիշտ արտասահման:

Վերոհիշյալ կարգալույծ քահանան դասվում է աշխարհականների շարքը իր նախկին՝ Սահակ Կյուրեղյան անունով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
14 հունիս 1988 թ.